

կհասնին՝ իրենց աւելորդ զարդարանքներուն ու մամուկի բոյնի նման հագուստներուն պատճառաւ: Եւ որովհետեւ այն հագուստները քիչ փողով չեն պատրաստուիր, — մանաւանդ որ շատ խաթուններու ծիծաղական սովորութեանը նայելով՝ մէկ անգամ հազնուած հագուստը մէյմըն ալ պիտի չհազնուէի, — միթէ կարելի է այսպիսի աւելորդ ծախքերու ըստակ բաւեցընել: Անոր համար ալ կտեսնես որ մէկը տարին 50 արծաթ ռուպլիի հագուստով վայելչապէս կանցընէ, եւ միւսին անպատճառ 5000 արծաթի հագուստ ու զարդարանք պէտք է տարին որ կարենայ ըսել թէ ես ալ իմ քաղաքիս առաջին մեծուհիներէն վար չեմ մնար . . .

Այսպիսի տնաւեր սովորութեան վրայ շատ բան կայ ըսելիք, բայց մեք առ այժմ այս մի-

այն ըսեմք սարսափմամբ՝ թէ ստրկի կարօտութիւնը քանի որ աւելնայ, անտարակոյս արծաթսիրութիւնն ալ մարդկանց մէջ քանի կերթայ կշանայ, Աստուած կմոռցուի, խղճմտանք ըսածդ մէկդի կգրուի, եղբայրսիրութիւնը կհալածուի, անձնասիրութիւնը կտիրէ, միաբանութիւն չմնար, եւ եթէ նիւթական աշխարհս չկործանի ալ շուտով, բարոյականը կքանդուի ու կկործանի. վասն զի ամէն մարդ ալ կապականի կմոլորի կհարանայ, ու չամբնար միտքը դնելու, Պուալոյին ըսածին պէս, եւ համարձակ ըսելու թէ

Ա՛խ ըստակ ըստակ, առանց ըստրկի ամէն բան դատարկ. Առաքինութիւնն առանց ըստրկի՝ առ ու գետին գարկ. Ըստակ քեռնիս, պաշտօն՝ փառք՝ պատիս դիւրաս կըշահիս. Ըստրկով մեծ մարդ կրնայ համարուի ծրրղեպն իջարիս:

Ծ Ի Ա Ծ Ա Ն

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԲՍԱԳԱՔԱԿԱՆ ԱՆՅԻՑ.

ԻՏԱԼԻՈՑ ՇԱՐԺՄՈՒՆՔՆԵՐԸ.

Տարի ու կէսէն աւելի է որ Իտալացիք չեն դադրիր պահանջելէն որ Հռոմը տրուի՝ իրենց երկրին մայրաքաղաք, եւ այժմ այս նոցա պահանջմունքը հետ զհետէ սաստկանալու վրայ է: Անթոնէլլի կարդինալը, որ պապին գլխաւոր գործակատարն է ամէն բանի մէջ, մանաւանդ թէ պապին դիտաւորութեանցը անգամ կառավարող ինքը կհամարուի շատ տարիներէ իվեր, իւր պաշտօնական գրուածքներովը կուզէ հաւտացընել օտար տէրութեանց դեսպաններուն թէ Իտալացիք գոհ են պապին աշխարհական իշխանութենէն, եւ պապը միայն Փիէմոնթի Թագաւորին հակառակ է: Եւ սակայն նոյն ժամանակը Իտալիոյ գրեթէ ամէն քաղաքները ոտք ելած են պապին աշխարհական իշխանութեանը դէմ, եւ Վիկտոր-էմմանուէլը կհանձնան իրենց օրինաւոր Թագաւոր: Նոյն իսկ Հռոմին մէջ ազգային ընկերութիւն մը հաստատուած է որ զժողովուրդը անդադար ոտք հանելու ետեւէ է պապին իշխանութեանը դէմ. եւ պապն ու քովինները այնքան շփոթած են որ սկսեր են պատրաստուիլ ոչնչա-

ցընելու այն ամենայն գաղտնի գրուածքներն որ ուրիշի ձեռք ընկածնին չուզուիր, եւ պահուելիք թղթերը սնտուկներով յուղարկելու Չիվիթա-Վէքքիա, եւ անկից՝ Թրեստի ճամբովը՝ Վեննա:


Այժմ ամենուն աչքը Քափրէ՛րա կղզւոյն վրայ դարձած է, ուսկից կսպասեն Իտալիոյ կատարեալ ազատութեանը՝ Կարիպալտին ձեռքովը: Այս զարմանալի մարդը Իտալացոց ընկերութեան մը մօտերս այսպիսի գիր մը գրած կլինի թէ «Ամէն քաղաք, ամէն գեղ, թէ մեծ եւ թէ փոքր, պէտք է զէնք առնուն. այն ատեն բռնաւորները կկործանին: Քիչ ժամանակէն բոլոր մեր գերի եղբայրները հասարակաց սեղանին չորս բոլորը կշարուին, եւ ազատութեան տօնը կտօնեն»:

Նափուլէոն կայսեր խօսքերէն այնպէս մը կըկարծուի թէ Իտալիոյ այս կարգէ դուրս շարժմունքներէն ինքը շատ չախորժիր. բայց նորա հորեղբորդին Գաղղիոյ ծերակուտին մէջ այնպիսի համարձակ ճառեր խօսեցաւ իջատագովութիւն իտալական ազատութեան որ կարելի չէ ըսելը թէ կայսեր բուն կամացը դէմ ընդդէմ հակառակ լինին:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԽՈՌՎՈՒԹԻՒՆԸ

Փետրուարի 13-ին նաւփլիա քաղաքին մէջ,—որ է Անապօրու կամ Նախոյի-սի-Ռոնսելիա ըսուածը,—խռովութիւն մը ելաւ, որոյ պատճառն էր Յունաց մէկ մասին իրենց այժմու կառավարութենէն տժգոյի լինելը: Զօրաց մէկ մասն ալ քա-

ղաքացւոց հետ միանալով՝ խռովութիւնը մեծցաւ ու տարածուեցաւ նաեւ Արգոս եւ Կորնթոս: Ամէնքին մէջ հանդարտութիւն է, բայց այն տեղըն ալ շատ մարդիկ բռնուեր՝ քանտ դրուեր են: Տէրութիւնը որոշեր է որ զէնքով նուաճէ այս խռովութիւնը, եւ շատ զօրք յուղարկեր է նաւփլիացւոց վրայ: — Գաղղիոյ լրագիրները կերեւի



Արէնք.

Թէ չափազանց կմեծցընեն Յունաստանի այս նոր խռովութեան պարագաները, բայց վեհնայի լրագիրներն ալ չափէ դուրս կպըզտիկցընեն. ասով ալ կիմացուի Թէ Աւստրիան ամենեւին չախորժիր

եւրոպական ճաճկաստանի քրիստոնէից շարժմունքներէն, եւ պատրաստ է նաեւ օգնելու Սամանցւոց որ ժամ մը առաջ յաղթեն իրենց դէմ ելած քրիստոնէից:

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք .

ԳԵՂԵՑԻԿ ՕՐԲԵԱԿ.

Փրակա քաղաքը չուր կոխելով՝ մեծամեծ վնասներ եղան: Մէկէն հարուստ մարդիկ բարեպաշտութեամբ յանձնաժողով կազմեցին ստակ ժողվելու, խեղճ աղքատաց օգնելու: Փրակայի բանտին մէջի բանտարկեալները այս բանս լսելով՝ իրենք եւս վառեցան եղբայրսիրութեամբ, ու ամէն մէկը բերնէն կտրած ու խնայութեամբ ժողված քիչ մը ստակը սիրով նուիրեց յօգուտ աղքատաց. բոլորը մէկտեղ եղաւ 179 ֆիորին: Յանձնաժողովը սիրով ընդունեցաւ այն թշուառ բանտարկելոց սրտառուչ նուէրը, ու շնորհակալութեան փառաւոր նամակ մը գրեց առ նոսա:

ԳԱՂՂԻՈՅ ԲՆԱԿՉՅՑ ԳԱՍՍԱՌՐՈՒԹԻՒՆԸ.

Գաղղիոյ վերջին աշխարհագրովը հետեւեալ հաշիւն եղեր է.

| | | |
|-----------------------------------|------------|------|
| Գաղղիոյ բոլոր բնակիչն է | 37,382,255 | ճոզի |
| Այր մարդիկ | 18,642,504 | — |
| Կին մարդիկ | 18,739,721 | — |
| Զկարգուած երիտասարդք | 10,210,756 | — |
| Օրիորդք | 9,487,541 | — |
| Արք ամուսնացեալք | 7,503,024 | — |
| Կանայք ամուսնացեալք | 7,457,115 | — |
| Այրի մարդիկ | 728,724 | — |
| Այրի կնիկմարդիկ | 1,795,065 | — |